

ԶԱՐԹՈՆԿ -ը կարելի է կարդալ նաեւ համա-
ցանցի վրայ հետեւեալ հասցեով՝
www.zartonkdaily.com
հնչաբե նաեւ ձեր անհատական թղթակցու-
թիւններն ու ծանուցումները կրնաք փոխան-
ցել խմբագրութեան հետեւեալ հասցէներուն՝
e-mail: zartonkadl@gmail.com
zartonkdaily@yahoo.com
P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon
Tel./Fax: +961 1 444225

ԶԱՐԹՈՆԿ

ՀԱՐՈՒՄԱՆ ԴՆՆԻՔ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN
77րդ Տարի, թիւ 188 (21,429) **ՀԱՐՈՒՄ, 29 ՕԳՈՍՏՈՍ 2015** **Հարտոնկ** جريدة سياسية أرمنية 4 էջ 1000 L.N.

1915-2015
Հայոց Ցեղասպանութեան
100-րդ տարեկից
Remember and Demand
ԿՐ ՅԻՇԵՄ ԵՒ ԿՐ ՊԱՅԱՆՁԵՄ
Je me souviens et j'exige
أتا أتذكر وأطالب



Լիբանանեան Լուրեր

Լիբանանեան Ռջ Մեկ Շրջան Համամիտ Ե Աղբերը Ընդունելու

Հայրենի Լուրեր

Լեռնային Ղարաբաղի Անվտանգութեան Խորհուրդի Նիստ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակո Սահակեան իրաւիքեց Անվտանգութեան խորհուրդի նիստ, որուն օրակարգին վրայ եղան Արցախի Հանրապետութեան հռչակման 24-րդ տարեդարձի տօնակատարութեան միջոցառումներուն նախապատրաստման ընթացքին եւ Ղարաբաղ-ազրպէյճանա-կան սահմանին վրայ տիրող իրավիճակի վերաբերեալ հարցեր: Ըննարկումներու ընթացքին զեկոյցներով հանդէս եկան Արցախի փոխվարչապետն ու պաշտպանութեան նախարարը: Նշեց, որ Արցախի անկախութեան եւ Հայոց Ցեղասպանութեան 100 ամեա-կին առիթով՝ համաշխարհային օփերային աստղերու մասնակ-ցութեամբ մեծ համերգ տեղի պիտի ունենայ Ստեփանակերտի կերտը:

Արցախի Սահմանին Վրայ Ազերիական Ներթափանցման Փորձը Ձախողած

Ղարաբաղ-ազրպէյճանական հակամարտ զօրքերու շփման գծին արեւելեան ուղղութեամբ, հակառակորդ դիմած է հետա-խուզաներթափանցման հերթական փորձի: Արցախի պաշտպա-նութեան բանակի յառաջապահ ստորաբաժանումները, ժամանա-կին հաւատանաշատ են ազրպէյճանական զինուորի 20-է 25 հոգիէ բաղկացած յատուկ շուքայիններու լարաշարակցումը եւ կո-րուստներ պատճառելով ետ շարտած գանդը: Բախումներուն ընթացքին հայկական կողմը կորուստներ չէ ունեցած: Բացի հե-տախուզական գործողութեան ազրպէյճանական կողմը երկ վաղ առաւօտեան՝ տարբեր տրամաչափի զինատեսակներէ գինարդ-դարի պահպանման դրութիւնը խախտած է շուրջ 110 անգամ, ո-րուն ընթացքին արձակած է 2000-է աւելի կրակոցներ: Պաշտպա-նութեան բանակի յառաջապահ ստորաբաժանումներու պատաս-խան գործողութիւններէն ետք՝ հակառակորդին աշխուժութիւնը ճնշուած է:

Նախագահ Մերժ Սարգսեան Սահմանադրական Փոփոխութիւններու Գծով Հանդիպումները Շարունակեց

Հայաստանի Հանրապետութեան նախագահ Մերժ Սարգսեան շարունակեց Սահմանադրութեան փոփոխութիւններու նախագի-ծին մասին կարծիքներու փոխանակման նպատակադրող հանդի-պումները՝ Հայաստանի քաղաքական կուսակցութիւններու ներկա-յացուցիչներուն հետ: Ան երկ հանդիպումներ ունեցաւ Հայոց հա-մազգային շարժում կուսակցութեան, Հայաստանի բրիտանական դեմոկրատական միութեան կուսակցութեան, ինչպէս նաեւ Ազատ դեմոկրատներ կուսակցութեան ներկայացուցիչներուն հետ:

Վերջին երկու օրերուն սահմանադրական փոփոխութիւններու շուրջ նախագահ Մերժ Սարգսեանի հետ քաղաքական խորհրդակ-ցութիւններուն մասնակցած քաղաքական գրեթէ բոլոր ուժերը, խորհրդարանական համակարգին – համամասնական ընտակար-գին անցնելու գաղափարը դրական գնահատած են: Այսպէս Այ-տարարեց Հանրապետական կուսակցութեան մամուլ բաժնէր, Ազ-գային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանով, կուսակ-ցութեան Գերագոյն մարմինի երկու պատմէն ետք: Ան նշեց, որ նախագահ Սարգսեան նիստի ընթացքին ներկայացուցած է՝ իր հանդիպումներուն ընթացքին պիտի շարունակուին եւ անկախ պատգամաւորներու հետ ալ հանդիպումներ տեղի պիտի ունենան: Ըննարկումն է լաւագոյն ճամբան ճշմարտութեան հասնելու», ըսաւ Շարմազանով: Նշեց, որ ժառանգութիւնն ու Հայ Ազգային Ընկերակցութիւնը մերժած էին սահմանադրութեան նախագիծին շուրջ ըննարկումներ կայացնելու Հայաստանի նախագահին հրաւերը:

Լրատուական տեղեկութիւնները նշեցին, որ թափուած աղբեր գտնուած են Շուֆի հարաւային Նիհա շրջանին եւ մօտակայ ժողովի միջեւ գտնուող հովիտին մէջ: Ազգային մէջ գործող հասարակական կազմակերպութիւններն ու խորհուրդները կոչ ուղղեցին կազմելու յատուկ խմբակներ, բացայայտելու եւ կանխարգիլելու համար աղբերը Ազգային միջազգային փորձերը: Խորհուրդները նաեւ պահանջեցին աղբերու հարցով որդեգրել վարչական ապակեղորանցումի ծրագիր մը: Իսկ Նամէ շրջանի քաղաքապետութիւնը հաղորդագրութեամբ մը մերժեց աղբանոցին վերաբացումը՝ «Սոյնիսկ մէկ ժամուան համար»: Քաղաքապետութիւնը յիշեցուց, որ աւանը 18 տարի շարունակ կրած է աղբերու տազնապին հետեւանքները, ուստի ժամը հասած է բարեկարգելու կացութիւնը: Արսէլի քաղաքացիները իրենց կարգին բողոքի նստացոյց մը կազմակերպեցին, «Արսէլը որեւէ կողմի աղբանոցը պիտի չդառնայ» խորագրին տակ:



հովական ուժերը կատարած են իրենց պարտականութիւնը եւ ունին բազմաթիւ վիրաւորներ: Անոր համաձայն ապահովական ուժերը պիտի պահպանեն ցուցարարներուն անվտանգութիւնը, պայմանաւ որ չխախտի հասարակական կարգը:

Միւս կողմէ ներքին գործոց նախարար Նուհատ Մաշնուք մամուլ առուլիս մը տուաւ, որուն ընթացքին խօսեցաւ անցնող քանի մը օրերու ընթացքին տեղի ունեցած ապահովական դէպքերուն, ցոյցերուն եւ անոնց ընկերակցած խնդիրներուն ու ապահովական ուժերու դերակատարութեան մասին: Նախարարը խօսելով վերոնկարգուած Պէյրութի մէջ տեղի ունեցած բախումներուն եւ խանգարիչ գործունեութիւններուն մասին նշեց, որ ինք ցուցարարները կը դատէ երկու խմբակի մէջ: Առաջին խմբակին մաս կը կազմեն այն քաղաքացիները, որոնք կը պահանջեն իրենց արդար իրաւունքները՝ առանց խախտելու օրէնքները: Իսկ երկրորդ խմբակին մաս կը կազմեն խանգարիչները, որոնք քանդիչ աշխատանք տարած են խախտելու ապահովութիւնը եւ վտանգելու ցոյցերը: Ըստ նախարարին խանգարիչները կը պատ-կանին քաղաքական կուսակցութիւններու: Նախարարը հաստատեց, որ սխալներ գործուած էին անցեալ Շաբաթ գիշեր տեղի ունեցած ցոյցին ընթացքին՝ նշելով, որ իրենց կը հետաքննեն ուժային անհամաձայն միջոցներու գոր-ծածութիւնը: Մաշնուք սակայն հաստատեց, որ ապա-րուստները պիտի վիրաւորուին: Անոր համաձայն ապահովական ուժերը պիտի պահպանեն ցուցարարներուն անվտանգութիւնը, պայմանաւ որ չխախտի հասարակական կարգը:

Ազգային Ազատ Հոսանքն Ալ Փողոցի Յոյց Պիտի Կազմակերպէ

Ազգային ազատ հոսանքը իր հետեւորդներուն կոչ ուղղեց՝ բո-ղոքի հաւաք մը կազմակերպելու յառաջիկայ Ուրբաթ օր Նահա-տակազ հրապարակին վրայ, «Որոշումներուն մասնակցութեան եւ փտածութեան դէմ պայքարի» խորագրին տակ: Փոփոխութիւն եւ բարեկարգում համախմբումի նախագահ երեսփոխան Միշէլ Աուն երկ մամուլ առուլիս մը տուաւ, որուն ընթացքին առաջարկեց քաղաքական տազնապի լուծման սոր նախաձեռնութիւն, նաեւ հրաւեր ուղղեց ցոյց կազմակերպելու: Իր լուծումի նախաձեռնու-թեան մէջ Աուն կոչ ուղղեց սոր նախագահը ընտրելու ուղղակի ժողովուրդէն, համամասնական ընտրական օրէնք մը վաւերացնե-լու՝ ապահովելու համար ժողովուրդին իսկական ներկայացուցչու-թիւնը, երեսփոխանական թափանցիկ ընտրութիւններ կատա-րելու, ապա կազմելու բարեկարգումներու ծրագիր վաւերացնող կառավարութիւն մը: Աունի համաձայն ինք այս ծրագրին այլ-ընտրանք չի տեսներ: Երեսփոխանը զօրակցութիւն յայտնեց քա-ղաքացիներու հաւաքներուն ու կարծիք յայտնեց, որ քաղաքացի-ները սկսած են գործածել իրենց տարիներ առաջ յայտարարած լուղուզները: Ան սակայն մերժեց փտածութեան ամբաստանու-թիւնները ընդհանրացնելը եւ հաստատեց, որ փողոցը միայն մէկ խմբակուրումի չի պատկանիր: Ան Լիբանանի կառավարութեան գոյատեւումին զօրակցող երկիրներուն ուղղելով իր խօսքը աւել-ցուց, որ իշխելու համար ժողովրդային զօրակցութիւնը կորսնցու-ցած իշխանութիւնը կը ծնի քստա եւ անկայունութիւն:

Երկրին Ապահովական Վիճակը Կը Շարունակէ Խախտումներու Ենթարկուի

Չինուորական ատեսնին մօտ կառավարութեան ներկայացու-ցիչ դատախազ Սաքր Սաքր, կալանաւորուած շէյխ Ահմատ Ասիրը փոխանցեց Չինուորական մնայուն դատարանին: Լիբանանեան բանակը խուզարկումներ կատարեց Թրիփոլիի մէջ, ուր Զըպպէ թաղամասէն ձերբակալեց Իսլամական պետութեան կազմակեր-պութեան անդամակցելու յանցանքով հետապնդուած գինեալ Ատնէ Պըրպէսը: Իսկ Արսէլի մէջ գինեալներ կրակ բացին Նեմ Ֆէլթիի վրայ ու զայն վիրաւորեցին, ապա առեւանգելով ընթա-ցան մօտակայ բարձունքներուն ուղղութեամբ: Պաշտպանութեան նախարար Սամիր Մուքպէլ տեսակցեցաւ լիբանանեան բանակի սպայակոյտի պետ զօրավար Ուալիտ Սըլմէիի հետ, ընտրելու համար կատարուող գինուորական գործողութիւնները, երկրին մէջ տիրող ապահովական կացութիւնը եւ հանգրուանի մարտահրա-ւերները:

Այն Էլ Զեյուն Գաղթակայանին Մէջ Անորոշ Իրավիճակ

Չգուշաւոր հանդարտութիւն կը տիրէ Սայտայի մօտիկ պա-ղեստինեան Այն Էլ Զեյուն գաղթակայանին մէջ, ուր աւելի քան շաբաթ մը ի վեր յաճախակի բախումներ տեղի կ'ունենան Ֆաթի կազմակերպութեան եւ իսլամական գինեալներուն միջեւ: Նախանցեալ գիշեր անծանօթներ երկու ռումբեր նետե-ցին գաղթակայանի թաղամասերէն մէկուն մէջ, պատճառելով նիւթական վնասներ, առանց զոհերու կամ վիրաւորներու:

Շրջանային Լուրեր

Ռուս-Ամերիկեան Ըննարկում Սուրիոյ Տագնապին Շուրջ

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ ռուս եւ ամերիկացի ներկայացուցիչներ պիտի ըննարկեն Սուրիոյ տազնապին զարգացումները: Նախարարութեան բան-բեր Մարիա Չախարովայի համաձայն, Ռուսիոյ արտաքին գոր-ծոց նախարարի օգնական Միխայիլ Պոկտանով այս գծով տե-սանցած է Սուրիոյ հարցով ամերիկացի յատուկ պատուիրակ Մայքըլ Ռաթնիի հետ:

Փաուըր Կը Չգուշացնէ Միացեալ Նահանգներու Մեկուսացումն

ՄԱԿ-ի մօտ Միացեալ Նահանգներու մնայուն ներկայացու-ցիչ Սամանթա Փաուըր գգուշացուց՝ միջազգային հրապարակին վրայ Ուաշինկթընի մեկուսացումն, եթէ Գոնկըտը մերժէ վաւե-րացնել Իրանի հետ կնքուած հիւլէական համաձայնութիւնը: Ըստ Փաուըրի Գոնկըտին մէջ հիւլէական համաձայնութիւնը մերժելը պիտի դժուարացնէ յետագային՝ Իրանի դէմ սոր պատ-ժամիջոցներ սահմանելու հաւանականութիւնը, ինչպէս նաեւ այլ երկիրներու հետ այս առումով համագործակցելու միջոցները:

Պաղտատի Մէջ Քաղաքացիներուն Համար Ապահովական Միջոցներու Մեղմացում

Իրաքի վարչապետ Հայտար Ապատի յայտարարեց, որ ապա-հովական ուժերէն պահանջած է իսկոյն թոյլատրել քաղաքա-ցիներու մուտքը՝ մայրաքաղաքի ապահովական կանաչ գօտի, ինչպէս նաեւ այլ թաղամասեր որոնք փակուած էին ապահո-վական նկատառումներով: Նշեց, որ վերջին շրջանին բարեկար-գութիւններ պահանջող զանգուածային ցոյցեր տեղի ունեցած էին ի մասնաւորի Պաղտատի մէջ, որոնց անմիջապէս ընդառա-ջած էր կառավարութիւնը նմանօրինակ քայլեր առնելով:

Թուրքիոյ Մէջ Ժամանակաւոր Կառավարութիւն Եւ Բախումներ Քիւրտերու Հետ

Թուրքիոյ անցումային կառավարութեան նշանակեալ վար-չապետ Ահմատ Տաւուտօղլու հաստատեց, որ անցումային ժամանակաւոր կառավարութեան կազմը պիտի ներկայացնէ նախագահ Ռեճեպ Թայյպ Էրտողանին: Ըստ Տաւուտօղլուին սոր կառավարութեան կազմին մէջ են ժողովուրդներու Դեմոկ-րատական կուսակցութեան անդամներ: Նշեց, որ կառավար-ութիւնը պիտի գործէ մինչեւ Նոյեմբեր 1-ին կայանալիք երես-փոխանական կանխահաս ընտրութիւնները: Անտոյլու լրա-տու գործակալութիւնը հաղորդեց, որ Քիւրտիստանի աշխա-տաւորական կուսակցութիւնը կրակի տուած է 4 բեռնակառ-քեր՝ երկրի հարաւ արեւելեան հատուածին մէջ: Թրքական լրատ-ւամիջոցները նաեւ հաղորդեցին, որ ապահովական ուժեր տար-բեր տեսակի զենքերու գործածութեամբ կրակ բացած են քա-ղաքացիներու տուններուն ուղղութեամբ՝ երկրի հարաւ արեւել-եան շրջանին մէջ տեղի ունեցած խուզարկումներուն ընթաց-քին: Սպաննուած են առնուազն 4 անձեր:

Միջազգային Լուրեր

Աւստրիոյ ոստիկանութիւնը հաստատեց, որ երկրին մէջ բացայայտուած են աւելի քան 70 գաղթականներու դիակներ: Ըստ կառավարութեան այդ մարմինները գտնուած են ապօրինաբար գաղթականներ փոխարող բեռնակառքի մը մէջ՝ կանգնած մայրուղիի մը վրայ: Աւստրիոյ ոստիկանութիւնը իր կարգին նշեց, որ բացայայտուած զոհերուն 4-ը երախաներ են: Ըստ հաղորդագրութեան դիակները հաւանաբար կը պատկանին սուրիացի գաղթականներու՝ նկատի առնելով, որ բեռնակառքին մէջ գտնուած են սուրիական փաստաթուղթեր: Իսկ Հունգարիոյ մայրուղիներէն մէկուն վրայ վիրաւորուեցան առնուազն 10 սուրիացիներ, երբ 18 անձեր փոխարող փոքր փոխադրակառք մը արկածի ենթարկուեցաւ: Վարորդը ռուսմանացի էր ու կը փորձէր ապօրինի միջոցներով սուրիացիներ տեղափոխել: ՄԱԿ-ի գաղթականներու գործակալութիւնը յայտարարեց, որ տարեսկիզբէն ի վեր աւելի քան 300 հազար գաղթականներ փորձած են ապօրինի միջոցներով Եւրոպա հասնել: 2014-ին այդ թիւը հասած էր 219 հազարի: Ըստ գործակալութեան այս ապօրինի գործողութիւններուն ընթացքին մինչ այժմ մահացած են 2500 անձեր, մինչ անցեալ տարի այդ թիւը հասած էր 3500-ի:

Ապօրինի Գաղթականներու Դիակներ Գտնուած են Աւստրիոյ Մէջ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Ընդունեց Լիբանանի Խորհրդարանի Նախագահին Եւ Մարոնիթ Եկեղեցւոյ Հոգեւոր Պետին Ներկայացուցիչները

Հինգշաբթի, 27 Օգոստոս 2015-ի երեկոյեան, Պրեֆայայի Ս. Աստուածածին վանքին մէջ Վեհափառ Հայրապետին այցելեցին Խորհրդարանի Նախագահ Ն.Վ. Նեպիի Պրիմի ներկայացուցիչները: Հանդիպման ընթացքին քննարկուով յատուկ նիւթ դարձաւ Պեյրուսի մէջ տեղի ունեցող ժողովրդային ցոյցերը, ինչպէս նաեւ երկրին անդրոլորտինը պահելու եւ նախագահական ընտրութիւնը շուտաւարջ կերպով կատարելու հրամայականը:



Վեհափառ Հայրապետը իր զօրակցութիւնը յայտնեց ժողովրդային ընկճումին նկատմամբ, միաժամանակ զգուշացնելով ժողովրդային ցոյցերուն քաղաքական բնոյթ տալու եւ օրինական ուժերու հետ բախումներ յառաջացնելու վնասաբեր փորձերէն: Նորին Արքեպիսկոպոսը նաեւ շեշտեց շուտաւարջ նախագահական ընտրութիւն կատարելու անհրաժեշտութիւնը, զայն նկատելով երկիրը դիմադրող շարք մը հարցերու լուծման առաջնորդող ապահով ճանապարհ:

Այս, Վեհափառ Հայրապետը ընդունեց Մարոնիթ Եկեղեցւոյ հոգեւոր պետ Րայի Պատրիարքին ներկայացուցիչը: Այս վերջինը տեղեակ պահեց Նորին Արքեպիսկոպոսը վերջերս Պատրիարքին ունեցած հանդիպումներուն գծով, յատկապէս՝ Նոր Նախագահի ընտրութեան առնչուած: Խորհրդակցութեան գլխաւոր նիւթը դարձաւ յառաջիկայ Երկուշաբթի օրուան Պրեքթի մէջ տեղի ունենալիք քրիստոնէյ-իսլամ հոգեւոր պետերու հանդիպումը: Այս ծիրէն ներս Վեհափառ Հայրապետը իր պատկերացումը ներկայացուց հոգեւոր պետերուն կողմէ կատարուելիք յայտարարութեան գծով:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբաններու Միա Կատարած Այցելութեան Տեսանիւթը Հրատարակուեցաւ

Արամ Ա. կաթողիկոսի թելադրութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան միաբանութիւնը ներկայացնող պատուիրակութիւն մը, Շաբաթ, 22 Օգոստոս 2015-ին այցելած էր Սիսի կաթողիկոսարան, ուր կատարուած էր հոգեհանգիստ՝ 1293-ին Հայոց կաթողիկոսութեան Սիս հաստատուելէն մինչեւ 1915 Սիսի մէջ գահակալած երջանակայիշատակ հայրապետներուն հոգիներուն համար:

Այս առիթով վարչին մէջ կարողացուած էր Արամ Ա. կաթողիկոսին պատգամը: 100 տարի ետք Սիսի կաթողիկոսարանի փլատակներուն մէջ առաջին անգամ կը հնչէր հայրապետական պատգամ՝ ուղղուած մեր ժողովուրդին:

Այս մասին տեսանիւթը արդէն հրատարակուած է ու զայն կարելի է դիտել՝ այցելելով <https://www.youtube.com/watch?v=mcT4iDGJ6KE>

ՀԱՅՎԱԿԱՆ ԱՆՅԵԱԼԵՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԱՅՍՕՐ ՏԻԳՐԱՆ ԸԱՄԻՐԱՆԵԱՆ

Մեր թուականէն 63 տարիներ առաջ՝ 1952ին Երեւանի մէջ մահացած է հայ դերասան Տիգրան Ըամիրխանեան:

S. Ըամիրխանեան ծնած է Շուշի 10 Մայիս 1899ին: Փոքր տարիքէն փոխադրուած է Պաքոն եւ ապա Թիֆլիս, ուր կրթութիւնը ստացած է Ներսիսեան դպրոցը: Երիտասարդ տարիքին հանդէս եկած է փոքր դերերով: 1921-1922 տարիներուն սորված է Մոսկուայի մէջ, ապա ընդունուած Մոսկուայի Թատերական արուեստի պետական ինստիտուտը, ուրկէ շրջանաւարտ եղած է 1924ին: Եղած է հիմնադիրը Երեւանի Պատանի Հանդիսատեսի Թատրոնին:

S. Ըամիրխանեան տարիներ շարունակ հանդէս եկած է որպէս կատակերգակ դերասան, խաղալով աւելի քան 40 դերեր: Անոր առաջին բեմերէն եղած է՝ 1929ին Երեւանի Պատանի Հանդիսատեսի թատրոնի անդրակի «Պայտիկը» ներկայացումը: Անոր նշանաւոր դերերէն է «Պեպօ» թատերգութեան մէջ Կիլիկի դերը: Ան բեմադրած է «Արշալոյսին», «Կանաչ Փողոց», «Երկու Տիրոջ Շանան», «Բամբասանք եւ Սեր» ու այլ թատերգութիւններ: Ան նաեւ թատերգութեան արուեստի մասին ունի գիրք մը՝ «Դերասանական Արուեստի Հիմունքներ» խորագիրով:

ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՈՂՋՈՅՆԸ ՍԻՍԵՆ...

22 Օգոստոս 2015...: Պատմութիւնը արդէն իր մատենակին մէջ ոսկեայ տառերով արձանագրեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին խիզախ քայլը՝ 100 տարիներ ետք Սիսի պատմական Կաթողիկոսարանէն ողջունելու հայ ժողովուրդը եւ հնչեցնելու պահանջատիրութեան ձայնը: Ձայն մը՝ որ կը ներկայացնէր Հայկի ազատատենչ ոգին. ձայն մը՝ որ արձագանգ էր 1293 թուականէն ի վեր, Սիսի մէջ հաստատուած Հայոց Հայրապետական Սուրբ Աթոռին ճամբով ծառայած սրբազան հայրապետներուն եւ Կիլիկիոյ տաճարներու կամարներուն տակ իրենց ձայնը առ Աստուած բարձրացուցած եռամեծ վարդապետներուն. ձայն մը՝ որ պոռթկում էր Հայոց Ցեղասպանութեան նահատակներուն արդարութեան կանչին. եւ վերջապէս ապագայատեսիլ արարք մը, որ կը յիշեցնէր իր ժողովուրդին դէպի «խոստացեալ Աւետեաց երկիր» առաջնորդութիւնը Մովսէս Մարգարէին:

21 Օգոստոս 2015-ին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան չորս միաբան հայրեր, Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը ստանալէ ետք մեկնեցան Սիս, իրագործելու համար Հովապետին փափաքը, որ վստահաբար փափաքն էր ողջ հայութեան:

Կարելի չէր չուզուի ի տես կիլիկեան թագաւորութեան փառքը հանդիսացող Սիսի բերդին, որուն ի պատիւ Կոստանդին Ա. Թագաւոր դրամ կոնիւէ տուած էր «Սոյո բերդն է թագաւոր» արձանագրութեամբ: «Թագաւոր»ը նախքան քաղաք մեր մուտքը հեռուէն մեզ դիմաւորեց՝ հայաշունչ աղօթքի կարօտին իր ծառայող արտայայտելով դէպի իր վեհութիւնը սեւեռած կիլիկեան չորս միաբաններուն:

Բերդի լանջին կը գտնուի հայութեան երբեմնի հոգեւոր կեդրոնը հանդիսացած Մայրավանքը գրեթէ աներակներու մէջ, կարծեք Կիլիկիոյ թագաւորական բերդին փոճկացող կուրծքին ցաւը ըլլար: Վանքին պատերը կարծեք զգացին մեր ներկայութիւնը, ճանջան մեր ձայները...: Ինչո՞ւ պիտի չզգային իրենց հարազատներուն ձայները, ինչո՞ւ պիտի չզգային 100 տարիներ առաջ պարտադրաբար հեռացած միաբան հայրերու ժառանգորդներուն ներկայութիւնը:

«13 Սեպտեմբեր [1915]՝ Խաչվերացի Կիրակին՝ լաց ու կոծի պատմական օր մը կ'ըլլայ թէ՛ միաբանութեան եւ թէ՛ այ Սոյո մէջ մնացող ափ մը հայութեան համար: Նոյն օրը վանքին բաւալիները տրցակով կը յանձնուին կամավարութեան: Արտաճմիկ էր պարզուած տեսարանը. հասած ըլլալով այլեւս մեկ-նումի վերջին ժամը, բաժանման այդ րոպէին արտասուքը յորդարատ կը հոսէր մեր աչքերէն: Վերջին մնաք բարոյիկ լալապին համբոյր մը եւս տալով Մայր Տաճարի սրբատաշ քարերուն կը մեկնինք անդարձ, բարբարոս ձեռքերուն յանձնելով՝ երջանակայիշատակ Կիրակոս մեծագործ Կաթողիկոսին օրով շինուած՝ Սոյո բազմադարեան Աթոռին հոյակապ վեհաշուք Կաթողիկոսարանով եւ յարակից բոլոր շէնքերով»:^[1]

Խաղ Եպս. Ազապահեանի «Վանքին կարաւանը» յօդուածին նկարագրած յուզումնախան տեսարանը կրկնուեցաւ, երբ 100 տարիներ ետք Կիլիկեան Աթոռին միաբանները արտասուքով մուտք գործեցին Սիսի Կաթողիկոսարանը: Խաղ Սրբազան մարգարեացած էր...: Այդ՝ թուրք բարբարոս ձեռքեր քարուքանդ

ղած էին հրաշակերտ վանքը: Կիրակոս մեծագործ Կաթողիկոսի հոյակապ վանքը աներակած էր. սակայն Կիրակոս Կաթողիկոսի յաջորդներէն Արամ Ա. Կաթողիկոսի վճռակամ ու յանդուգն քայլը՝ Թուրքիոյ պետութեան դէմ դատ բանալու եւ Կաթողիկոսարանի վերադարձը պահանջելու արի կեցուածքը՝ յոյսի նոր նշույներ կը սերմանէ այսօր իւրաքանչիւր հայորդիի հոգիին ու սրտին մէջ: Հոգեւոր խաղ Սրբազան, ձեր «մնաք բարոյ»ը միայն ցոնտութիւն մըն էր...: Դուք մեկնեցաք վանքէն անդարձ, սակայն ձեր յաջորդները իրենց Հովուապետին առաջնորդութեամբ որոշած են վերականգնել իրենց եկեղեցւոյ ու ժողովուրդին արդար իրաւունքը:

Սիսի փլատակներուն մէջ կատարեցին հոգեհանգստեան պաշտօն, 1293-1915 Կաթողիկոսարանին մէջ ծառայած Սրբազան Հայրապետներուն ու հոգեւորականներուն հոգիներուն համար: Ի՞նչ յուզումնախան պահ՝ ջարդի ու քցողի ահաւոր պատկերներով լեցուն...:

Սակայն մեր հաւատքը հզօրացաւ ու կամքը պրկուեցաւ՝ երբ Կաթողիկոսարանի աներակներուն մէջ հնչեց ապագայատեսիլ պատգամը Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին: 100 տարիներու ծառայ ունեցող վանքի պատերը ընկալեցին ու արձագանգեցին Հայոց Հայրապետին պատգամին բառերը. «Եթէ կորսնցուցինք հողերէն Կիլիկիան, շինեցինք սակայն հոգեղէն Կիլիկիան: Եւ սա պահուն, հոգեղէն Կիլիկիայէն միաբանութեան ներկայացուցիչները եկած են խոսարհելու՝ մեր սրբացեալ նահատակներու եւ Սիսի Կաթողիկոսարանին մէջ Հայրապետական գահ բարձրացած ու մեր ժողովուրդը առաջնորդած Հայրապետներուն ինկէլէ յիշատակին առջէ: Անոնք եկած են Մեր թելադրութեամբ ու օրհնութեամբ, հայու քրտինքով եւ արինով թրծուած կիլիկեան հողին ու յատկապէս Սիսի պատմական Կաթողիկոսարանի միւռնաբոյր հողին վրայ կանգնած՝ մեր դարաւոր Կաթողիկոսարանին վերադարձը պահանջելու եւ մեր ժողովուրդի պահանջատիրութիւնը վերահաստատելու՝ հաւատարիմ նահատակներու սրբազան կտակին»:^[2]

Սոյն տողերը թուրքին կը յանձնեն հոգեղէն Կիլիկիային մէջ, երբ տակաւին թարմ են մեր մէջ հողերէն Կիլիկիոյ ուխտագնացութեան ապրումները, յուզումները, պոռթկումները...: Արդարեւ թէեւ հողերէն Կիլիկիային հետ կապ սոր տտեղծուեցաւ, սակայն հոգեղէն Կիլիկիան՝ ուր սնած ու աճած են, կրցած էր մէջս վառ պահել ԿԻԼԻԿԻԱՆ իր անցելով ու ապագայով:

Սիսի Կաթողիկոսարանի փլատակներուն մէջ, 100 տարիներ ետք հնչող Հայրապետական ողջունը ուղղուած հայ ժողովուրդին առաջնորդող հրաւեր է՝ «ՅԻՇԵՆԸ, ՅԻՇԵՆԸ ԵՎ ԴԱՅԻՆՑԵՆԸ»:

Յուսիկ Ծ. Կոր. Մարտիրոսեան

[1] Քիւզնը Եղիայեան, Ժամանակակից Պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, (Անթիլիաս-Լիբանան: Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975), 166-167:
[2] Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, ՈՂՋՈՅՆ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԻՍԻ ԿԻՐԱՎՈՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ, (Հայրապետական Պատգամ արտասանուած Սիսի մէջ, 22 Օգոստոս 2015):

Գալ տարի Վան Պատառիկներ Երազային Արեւմտահայաստանէն Մ Ե ր Ա ր ա տ ր ը

Պայազիտը շատ մօտ էր պարսկական սահմանին: Ինչպէս ըսի, թրքական էր պարսկական սահմանագիծի պահակներու աշտարակները իրարմէ շատ հեռու չէին:

Ճաշի համար պատը կանգ առաւ արդիական ճաշարանի մը առջէ: Կ'անձրեւէր: («Կ'անձրեւէ, տղա՛ս...: Կ'անձրեւէ՛» երբեմն հոգիիդ մէջ ալ): Այո՛, մեր հոգիները թաց էին ի տես մեր վեհապետի մեր Կիլիկեան Աթոռին միաբանները արտասուքով մուտք գործեցին Սիսի Կաթողիկոսարանը: Խաղ Սրբազան մարգարեացած էր...: Այդ՝ թուրք բարբարոս ձեռքեր քարուքանդ

ղած է: Պարսիկները մեր լեռը կը կոչէն «Գուհ-Ե-Նուհ», այսինքն՝ Նոյի Լեռ:

Արարատ լեռան գագաթը առաջին անգամ լուսաւորեց եղած են Ֆրեւտերից Պարոթը եւ Խաչատուր Աբովեանը, 1829-ին: Այս առիթով Խաչատուր Աբովեանը փոս մը կը փորէ լեռան գագաթը եւ դէպի հիւսիս Նայոյ փայտաւր խաչ մը կը տնկէ հոն: Նոյն պէս ան շիշի մը մէջ ձիւն կը լեցնէ եւ վար կը բերէ իր հետ, որպէս սուրբ ջուր:

1840-ի 7.4 ռիսթը ուժգնութեամբ երկրաշարժին եւ հրաբուխին պատճառով 10,000 մարդ կը մահանայ, ներառեալ 1900 հոգի հայաբնակ Ակորի գիւղէն, որոնք ողջ-ողջ կը թաղուին հողասահանքի պատճառով:

Հայաստանէն միայն 20 քմ գեռաւորութեան վրայ մեր այս Լեռը, Համաշխարհային Առաջին Պատերազմէն ետք 1923-ին, Լոզանի Ղաշնագրով անցաւ Թուրքիոյ տիրապետութեան տակ: Արարատը մեր Ազգային Ինքնութեան խորհրդանիշն է: Երեւանի երկնակամարին վրայ իշխող ան մեր Ազգային Խորհրդանիշն է: Հայ ժողովուրդի յաւերժութեան երաշխիքն է Ան:

Խորհրդային կարգերու ժամանակ, Թուրքիան կը բողոքէ Սովետական Միութեան Արտաքին գործոց նախարարութեան ըսելով, որ Արարատ Լեռը Թուրքիոյ կը պատկանի եւ հետեւաբար Հայաստանը իրաւունք չունի զայն պատկերացնելու իր գիւնակալին վրայ: Սովետական Միութեան արտաքին գործոց նախարարը հարց կու տայ թուրքերուն, թէ լուսինը երբուքն՝ Թուրքիոյ սեփականութիւնն է, որ ան իր դրօշակին վրայ գետնեղած է գայն...:

Առժամաբար, բայց բաւական երկար ժամանակով, Արարատը կորսնցուցինք: Երկուշաբթի Յուլիս 14-ի առաւօտեան, աղուոր նախաճաշ մը ընելէ ետք, տեղաւորուեցանք մասնաւոր փոքր պասերու մէջ Արարատի ստորոտը երթալու եւ անոր սրբազան հողը համբուրելու:

Օղը անձրեւտու եւ փոթորկուտ էր: Կայծակները իրարու կը յաջորդէին: Լաւ պատսպարուած էինք: Մեր դիրքի ուղեկցողը ըսաւ, որ ամէն առտու այս է անակը: Անձրեւ, փոթորիկ, հով, կարկուտ, կայծակ, որոտում, բայց ժամը 10:00-11:00 ի ատենները կը հանդարտի օղը եւ արեւը իր շերմութեամբ կ'ողորմէ Լեռը: Ի՞նչ գիտնար մարդը, որ Արարատը սաստիկ բարկացած՝ կը բողոքէր իր անտերութեան վրայ: Ան իր իսկական տերերը կը փնտռէր: Ո՛վ էր թուրքը, որ իր սեփականութիւնը կը նկատէր Արարատը: Ո՛չ: Լեռն անգամ գիտէր իր իսկական տիրոջ ո՛վ ըլլալը: Հայոց Աստուածները կը փորձէին շահաբախտ Թուրքիան, բայց աւա՛ր, մենք անգամ մոռցեր էինք զանոնք: Իրենց բարկութեան եւ յուզումին մէջ կու լային անոնք: Եւ մենք փոքր պատերով պիտի երթայինք մեր ՀԱՍՏՈՒԱԾՆԵՐՈՆ ՆՈՒՅՆ, ըսելու որ «ոչ, մենք չենք մոռցած ձեզ, մենք եկած ենք ուխտելու, որ ամէն բան պիտի ընենք օր մը ձեզ բերելու մեր սահմաններէն ներս, խոստանալու որ օր մը անգամ ման, բիրաւոր հայերս ձեռք-ձեռքի շուրջ պար պիտի բռնենք եւ մեր ոտքերու դոփիւներով պիտի արթնցնենք Վահագնը ու Անահիտը, Փոքր Միերը եւ Հայոց Հին Աստուածները»:

(Շարք՝ յաջորդիկ)

Մ Ճ Ա Կ Ո Ւ Թ Ա Յ Ի Ն Ա Ր Ձ Ա Գ Ա Ն Գ

Արամ Խաչատրեանի Անուան Trio-ն Ցեղասպանութեան Տարելիցին Նուիրուած Համերգներով Հանդէս Դիտի Գայ Շարք Սը Երկիրներու Մէջ

Արամ Խաչատրեանի անուան Trio-ն Ցեղասպանութեան տարելիցին նուիրուած համերգներով հանդէս պիտի գայ չորս երկիրներու մէջ: Այս մասին կը հաղորդէ Armenpress.am-ը:

Խաչատրեանի անուան Trio-ի դաշնակահարուհի Արմինէ Գրիգորեան յայտնած է, որ Trio-ն շատ ոգեւորուած է յառաջիկայ համերգային շրջագայութիւններով:

«Սեպտեմբերից համերգներով հանդէս կը գանք Գերմանիայում, Ճափոնիայում, Ռուսաստանում եւ Իսպանիայում: Թղթիլով մեր համերգերից մէկը կը կայանայ շատ հեղինակաւոր համերգասրահում՝ Suntory Hall-ում: Ճափոնիայի շրջագայութիւնը կազմակերպում է տեղի Հայաստանի դեսպանութիւնը՝ անձամբ դեսպանի նախաձեռնութեամբ: Պէտք է ասել, որ ճանապարհածախսը եւ ուղեւորութեան ծախսերը հոգում է Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի միջոցառումները կազմակերպող յանձնաժողովը: Մեզ համար մեծ պատիւ է ելոյթ ունենալ, ներկայացնել մեր արուեստը, հնչեցնել հայ երաժշտականների ստեղծագործութիւնները», նշած է Արմինէ Գրիգորեան:



Բացի այդ Սեպտեմբերէն Լոյմբեր երկարող ժամանակաշրջանին, Trio-ն համերգներով հանդէս պիտի գայ Ռուսաստանի տարբեր բնէրու վրայ: «Ե՛լ որպէս Trio, ե՛լ որպէս մենակատարներ՝ հանդէս կը գանք մի քանի ռուսական նուագախմբերի հետ: Ունենք նաեւ հրաւեր Իսպանիայից, այնտեղ հանդէս կը գանք Դեկտեմբերին», տեղեկացուցած է դաշնակահարուհին:

Արամ Խաչատրեանի անուան Trio-ն ծրագիրներ ունի նաեւ Հայաստանի մէջ. Սեպտեմբերին երաժիշտները պիտի ներկայացնեն Հայոց Ցեղասպանութեան տարելիցին նուիրուած նոր ձայնակաւառակ՝ հայ երգահաններու ստեղծագործութիւններով: Ձայնակաւառակը կը կոչուի «Armenian Masterpieces»:

Աշխարհի Յառաջատար Հեռուստաընկերութիւնները Չբօսաշրջային Ժապաւեններ Կը Ներկայացնեն Հայաստանի Մասին

Աշխարհի վրայ Հայաստանը աւելի ճանաչելի դարձնելու համար՝ տարուէ տարի աւելի շատ շուկայական քայլեր կ'իրականացուին: Այս մասին ըստ Artsakhpress.am-ի ըսած է՝ Հայաստանի տնտեսութեան նախարարութեան գրասալոններէն բաժնի պետ Մեխակ Ապրետեան:



«Սկսած 2001 թուականից՝ Հայաստանի ճանաչելիութիւնը բարձրացնելու ուղղութեամբ տարբեր միջոցառումներ ենք իրականացրել: Այդ միջոցառումները հիմնականում իրականացուած են պետութեան եւ մասնաւոր հատուածի համագործակցութեամբ, Հայաստանի Թուրիզմի զարգացման հիմնադրամի եւ թուրիստական ընկերութիւնների հետ համատեղ», նշած է Ապրետեան:

Ապրետեանի խօսքով տարբեր երկիրներէ լրագրողներ եւ գրասալոններէն Հայաստան: Հրաւիրուած լրագրողներու ծիրէն ներս եղած են նաեւ հեռուստալրագրողներ, որոնք եկած են տեսնելու Հայաստանը եւ մեր երկրի մասին ժապաւեն նկարած են:

«Տարբեր երկրների կողմից արուած ֆիլմաշարեր էլ են եղել, օրինակ լեհական, ֆրանսիական, ուլթրաիական, արգենտինական եւ այլն: Ֆիլմերից մէկը՝ «Armenia The Land of Noah»-ն նկարահանել է իսպանական շատ յայտնի «Documentary maker»-ը, որը վաւերագրական ֆիլմեր նկարելու մէջ մասնագիտացած կինոընկերութիւն է, շատ բարձրորակ ֆիլմ են նկարել: Այն արդէն ձեռք է բերուել եւ ցուցադրուել բազմաթիւ յայտնի, միջազգային հեղինակաւոր հեռուստալիքների կողմից, ինչպիսիք են իսպանական «Television Espanola»-ն միջազգային «TVE international» հեռուստալիքները, «TVE 1» եւ «TVE 2» ներքին հեռուստալիքները,- ըսած է Ապրետեան աւելցնելով, որ ժապաւենը ձեռք բերած է հեռարձակած են նաեւ սքանտինաւեան երկիրները, Չեխիոյ ազգային հեռուստաընկերութիւնը, ֆրանսական «TV 5»-ը եւ իտալական «RAI»-ը: Հայաստան եղած է նաեւ «American travel channel»-ն ու նկարած «Bus travel» ժապաւենը եւ արդէն գայն ցուցադրած:

«Bus travel»-ը մեր գինիի, տնային, մրգային օղիներու՝ թուրքի, խնձորի, հոնի, դեղձի, խաղողի, հայկական աւանդական խնամանքի, հարսանիքներու, տարբեր աւանդական ձեռնարկներու մասին պատմող ժապաւեն է:

Ապրետեանի խօսքով բացի ձեռնարկներու կազմակերպումէն եւ ժապաւեններու նկարահանումներէն ու ցուցադրումէն, նաեւ գովազդատեղեկատուական նիւթեր կը տպագրուին ու կը տարածուին՝ Հայաստանը աշխարհին աւելի ճանաչելի դարձնելու համար:

Իրաքահայ Վաստակաւոր Գեղանկարիչ Անդրանիկ Օհաննեսեանի 100 Նկարներու Ցուցահանդէսը՝ Նուիրուած Հայոց Ցեղասպանութեան 100-րդ Տարելիցին

Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նշումներու ծիրէն ներս, նախաձեռնութեամբ Իրաքահայ Թեմի Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցի յանձնախումբին, Օգոստոս 22-ին տեղի ունեցած է Իրաքահայ վաստակաւոր գեղանկարիչ Անդրանիկ Օհաննեսեանի նկարներու անհատական ցուցահանդէսը, որ կը ներկայացնէ Ցեղասպանութիւնը խորհրդանշող հարիւր իւղանկարներ: Այս մասին ըստ «Հայերն Այսօր»ի, կը հաղորդէ Արամ սրկ. Զեթենճեան:



Ցուցահանդէսը, որ հովանաւորուած է Իրաքահայ թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Աւագ արքեպիսկոպոս Ասատուրեանի կողմէ, տեղի ունեցած է Պաղատի առաջնորդական Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ համալիրէն ներս՝ նորակառոյց շէնքի դահլիճին մէջ:

Իրաքահայ Թեմի պատասխանատուներու եւ յանձնախումբերու կողմէ, այդ ձեռնարկին ներկայ եղած են Իրաքի մէջ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Կարէն Գրիգորեան, տարբեր մասնագիտութեամբ տեղացի մտաւորականներ, բժիշկներ եւ արուեստագետներ, Իրաքի Քրիստոնէից եւ այլ Կոստներու Տնօրէնութեան ներկայացուցիչը, հայ եւ դաւանակից եկեղեցիներէն հոգեւոր հայրեր, թեմի կեդրոնական վարչութեան անդամները եւ մեր գաւակներէն հոծ բազմութիւն, ինչպէս նաեւ քանի մը հեռուստալիքներու լրագրողներ, որոնք արձանագրած են օրուան ձեռնարկը եւ հարցազրոյցներ կատարած:

Ձեռնարկի աւարտին վերոյիշեալ համալիրէն ներս գտնուող ազգային Վարժարանի Կիւլպէնկեան սրահին մէջ, հայ եւ օտար անձաւորութիւններու բաժնուած են օրուան համար պատրաստուած յատուկ յուշանուէրներ:



Յիշատակութեան արժանի է, որ այս ցուցահանդէսը գեղանկարիչ Անդրանիկ Օհաննեսեանի անհատական տասներորդ ցուցահանդէսն է:

ՔԱՂՈՒԱԾ-ԲՆԵՐ ՕՏԱՐ ՄԱՄՈՒԼԷՆ

Վատիկանը Պիտի Սրբադաս 1915ին Սպաննուած Եպիսկոպոսը

Այսօր, Լիբանանի մէջ կայանալիք հանդիսութեան մը ընթացքին, սուրբ պիտի հռչակուի Օսմանեան կայսրութեան տիրապետութեան ժամանակաշրջանին նահատակուած սուրիացի կաթողիկէ եպիսկոպոս Ֆլաւիանո Մելքին: Այս մասին կը գրէ իտալական «Մասաճերո» թերթը:



Ֆրանսիս պապը այս ամսուան սկիզբը վաւերացուցած էր այս կապակցութեամբ Սուրբերու դատի ժողովին որոշումը: Մելքի ծնած էր Զալեթ Մարա (այժմու Թուրքիա) 1858-ին ու սպաննուած էր օսմանցի զինուորներու կողմէ ճեգրիէի մէջ, 29 Օգոստոս 1915-ին, երբ մերժած էր իսլամ դառնալ:

Շաբաթ, Օգոստոս 29-ին կայանալիք հանդիսաւոր պատարագին պիտի մասնակցին Լիբանանի, Սուրիոյ ու Իրաքի արեւելեան եկեղեցիներէն բազմաթիւ պատրիարքներ: Մելքի կը հանդիսանայ երկրորդ եպիսկոպոսը, որ այս պատիւին կ'արժանանայ՝ երանելի Իգնատիոս Մալոյեանէն ետք:

Մարզական

ԻՐՐՈՒՍ ԼԻԿԻ ՓԼԵՅ ՕՖԻ ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԴՈՐՁ ՊՈՐՈՒՄԻԱ - OSS 7-2

Իրրոս Լիկի խմբակներու հանգրուանին իրենց տեղերը ապահովելու վերջին հանգրուանի դարձի մրցումներուն մրցեցան 44 խումբեր: Գերմանիոյ առաջատար «Պորուսիա Տորթ-մունս»-ը իր դաշտին վրայ ընդունեց Նորվեգիոյ Օտտ խումբը, որուն երթին յաղթած էր 4-3 հաշիւով: Օրուան աստղը Մարքո Ռեյսն էր: Հալվորսընը հաշիւը բացաւ «Օտտ»ի համար 19րդ վայրկեանին, Կրեկաարտի փոխանցումով: Միսիթարեանը նշանակեց «Պորուսիա»ի առաջին կողմ 25րդ վայրկեանին,



Հիւմըլսի փոխանցումով: 27րդ վայրկեանին Ռեյսը հաշիւը դարձուց 2-1, Կիւնտոկանի փոխանցումով: 32րդ վայրկեանին Ռեյսը նշանակեց իր երկրորդ կողմ, Միսիթարեանի փոխանցումով: 40րդ վայրկեանին Զակաուան հաշիւը դարձուց 4-1, Կիւնթըրի փոխանցումով: 51րդ վայրկեանին Կիւնտոկան նշանակեց «Պորուսիա»ի 5րդ կողմ, Հոֆմանի փոխանցումով: 57րդ վայրկեանին Ռեյսը նշանակեց իր երրորդ կողմ, Միսիթարեանի փոխանցումով: 64րդ վայրկեանին Պրոկ կրճատեց հաշիւը «Օտտ»ի համար, Հալվորսընի փոխանցումով: 90րդ վայրկեանին Զակաուան հաշիւը դարձուց 7-2, Աուպմեյանի փոխանցումէն օգտուելով: «Պորուսիա»ն յաղթեց 7-2 հաշիւով եւ հասաւ խմբակներու հանգրուան: Այս հանգրուանին արձանագրուեցան նաեւ հետեւեալ արդիւնքները (ընդգծուած են յաղթող խումբերը).

- Կայրաթ Ալմաթի (Ղազ.) - Պորոս (Ֆրանսա) 2-1, երթ.0-1
- Եապլոնեց (Չեխ.) - Ալաքս Ամսթերտամ (Հոլ.) 0-0, երթ.0-1
- Ռուպին Զագալ (Ռուս.) - Ռապիթիշքի (Մակեդ.) 1-0, երթ.1-1
- Լոլ.Քարլոս Ետուարտո 35րդ, փոխ.Քանունիքով,
- Եի ճէյ Զէյ Հելսինքի (Ֆին.) - Քրասնատար (Ռուս.) 0-0, երթ.1-5
- Անեթ Եթիէ (Ֆրանսա) - Միլսամի (Մոլտաւ.) 1-0, երթ.1-1
- Ռոզընաթոկ (Նորվ.) - Սթեաուս (Ռուս.) 0-1, երթ.3-0
- Վոյլոտիսա (Սերպ.) - Վիթթորիա Փլոզն (Չեխ.) 0-2, երթ.0-3
- Սալցպըրկ (Աւստրիա) - Տիւնսո Միլսը (Պելառ.) 2-0, տուգ. 2-3, երթ.0-2
- Պորուսիա Տորթմունս (Գեր.) - Օտտ (Նորվ.) 7-3, երթ.4-3
- Ալեթիթ Պիլսաո (Սլաւ.) - Ժիլիսա (Սլովաք.) 1-0, երթ.2-3
- Լոլ.Էլուսթոնսո 24րդ,
- Միտթիլանտ (Դանիա) - Սաութեմփթըն (Անգ.) 1-0, երթ.1-1
- Վոյլոտիսա (Սերպ.) - Չարիա Լուկաւսը (Ուկր.) 3-2, երթ.1-0
- Պելենեստ (Փորթ.) - Ռայնտորֆ Ալթաշ (Աւստրիա) 0-0, երթ.1-0

ԶԵՄՓԻՆՆԵՐ ԼԻԿԻ ԽՄԲԱԿՆԵՐՈՒ ՎԻՃԱԿԱԶԳՈՒԹԻՆ

Զեմփիլնգ Լիկի խմբակներու վիճակագրութիւնը կատարուեցաւ: Խմբակները բաժնուեցան հետեւեալ ձեւով.
Ա.խմբակ.Փարի Սեն Ժերմէն, Ռեալ Մատրիտ, Շախտիոր Տ., Մալմեօ,
Բ.խմբակ.Փի Ես Վի Այնտհովըն, Մանչեսթըր Ետն., ԲԿՄԱ, Վոլֆսպուրկ,
Գ.խմբակ.Պենֆիլթ, Աթլետիքո Մատրիտ, Կալաթասարայ, Ալթաւան,
Դ.խմբակ.Եուվեթիսա, Մանչեսթըր Սիթի, Սելիլիա, Պոր. Մեոսընկլատայիս,
Ե.խմբակ.Պարսելոնա, Պայեր Լեվերքուզըն, Ռոմա, ՊԱԹԵ Պորիսով,
Զ.խմբակ.Պայըրն Միլնիի, Արսենալ, Օլիմպիաքոս, Տիւնսո 2ակրեպ,
Է.խմբակ.Չելսի, Փորթօ, Տիւնսո Զիւ, Մաքալի ԹԱ,
Ը.խմբակ.Չեխիթ Ս.Փեթ., Վալենսիա, Օլիմպիե Լիոնէ, Կենթ,

ՌՈՍԻՏՅՐ ԲԱԺԱԿԻ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԹՈՐՓԵՏՕ ԱՐՄԱՎԻՐԸ ԵՒ ՎՈԼԿԱՆ ՅԱՂԹԵՑԻՆ

Ռուսիոյ բաժակի մրցաշարի 4-րդ հանգրուանին, Արմավիրի «Թորփետո»ն եւ Նիժնի Նովոքոնոսի «Վոլկան» հասան վերջին երեսներուցի հանգրուան: Ստորեւ տեսնել 4-րդ հանգրուանի երկրորդ օրուան արդիւնքները
- ՍԵԱ Ռոսթով (Գ.Դաս.) - Թորփետո Արմավիր (Բ.Դաս.) 0-2, կողմ.Իրաքի Կեփերիծէ 4րդ, ժան ժագ Պուկուի 7րդ,
- Մեթալուրկ Լիպեց (Գ.Դաս.) - Վոլկան Նիժնի Նով. (Բ.Դաս.) 0-2, - Պելոկուրսը (Գ.Դաս.) - ՍԵԱ Եւրեկիսա Խապարովսք (Բ.Դաս.) 0-4
- Պայրալ Էրբուրսք (Բ.Դաս.) - Թոմ Թոմսք (Բ.Դաս.) 3-2
- Փաքով 747 (Գ.Դաս.) - Թոսո Թիլիսին (Բ.Դաս.) 0-1
- Կիմքի (Գ.Դաս.) - Թիւմեն (Բ.Դաս.) 3-0

ԶԵՄԱՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԵՐՁ ՆԱՍԻՈՆԱԼԸ ԶԻՋԵՅԱՒ ԻՐ ԴԱՇՆԻՆ ՎՐԱՅ

- Տեի. Լա Կուայրա (Վեւ.) - Սփորթիւօ Լուքուենիօ (Փար.) 1-1
- Սասիոնալ (Ուրուկ.) - Սանթա Ֆէ (Բոլ.) 0-2
- Ունիվերսիտատ Զաթուիքա (Չիլի) - Լիպերթաու (Փար.) 2-3
- Պելկրանսօ (Արժ.) - Լաուուս (Արժ.) 1-1
- Էմելէք (Էքոլ.) - Եուվեթիսա (Ուրուկ.) 0-0

ԱՐՄԱՆԻՆԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԴՈՐՁ ԻՆԹԵՐՆԱՍԻՈՆԱԼԸ ԵՒ ԿՐԵՄԻՈՆ ՅԱՂԹԵՑԻՆ

- Ռոզարիօ Սալթոնալ - Ֆերրօ Զարրիլ Օեսթ (Բ.Դաս.) 0-0, տուգ.5-3

ՊՐԱՇԻՆԻ ԲԱԺԱԿԻ 1/8-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԴՈՐՁ ԻՆԹԵՐՆԱՍԻՈՆԱԼԸ ԵՒ ԿՐԵՄԻՈՆ ՅԱՂԹԵՑԻՆ

- Իթուանսօ (Շրջ.Լիկա) - Իլլեթրապիլոնալ 1-2, երթ.0-2
Կլոեր.Ռոնալտօ 67րդ - Վալտիկա 6րդ, Ետուարտօ Սաշա 74րդ
- Կրեմիօ - Զորիթիպա 3-1, երթ.1-0

Մարզական

(Շարունակում Գ. Էջ 1)



ՇԱԲԱԹԱՎԵՐՁԻ ԿԱՐԵՒՐ ՄՐՑՈՒՄՆԵՐՈՒ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Ստորև տեսնել շաբաթավերջի կարեւոր մրցումները յայտագիրը (փակագիրները մեջ խումբին դիրքը):

ԿԻՐԱԿԻ 30 ՕԳՈՍՏՈՍ 2015 ժԱՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ 5-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Գանձասար Կապան (4) - Փինկի (3) 16:00
Ուլիս (8) - Միքա (7) 16:00

ՍՊԱՆԻՈՅ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Եյպար (1) - Աթլետիկ Պիլպաս (17) 19:30
Սեւիլիա (13) - Աթլետիկ Մատրիս (3) 21:30
Վալենսիա (15) - Տեփոթիս լա Քորուսիա (8) 21:30
Լաս Փալմաս (19) - Լեւանթ Վալենսիա (16) 23:30

ԱՆԳԼՈՅ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Սաութեմփթըն (18) - Նորիչ Սիթի (8) 15:30
Սուանսի Սիթի (6) - Մանչեսթըր Եուն. (4) 18:00

ԳԵՐՄԱՆԻՈՅ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Պորուսիա Տորթմունտ (1) - Յերթա Պերլին (7) 16:30
Վերտեր Պրեմլըն (15) - Պոր.Մեոսլընլիկատայախ (18), 18:30

ԻՏԱԼԻՈՅ 2-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Ռոմա (11) - Եուվեթսիա (17) 19:00
Թորինո (6) - Ֆիորենտինա (3) 21:45
Լափոլի (14) - Սամպորիա (1) 21:45
Քիեո Վերոնա (2) - Լացիո Ռոմա (4) 21:45
Քարմի (20) - Ինթեր Միլան (7) 21:45

ՖՐԱՆՍԱՅԻ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Սենթ Էթիեն (10) - Պասթիա (2) 15:00
Պորտո (14) - Նանթ (4) 18:00

ՍՈՒՍԱՅԻ (8) - Փարի Սեն Ժերմեն (1)

Փորթուսիա 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ 22:00

ՓՈՐՏՈՒԿԱԼԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Փաշու Տե Ֆերեյրա (7) - Արուբա (1) 19:00
Աբադեմիլլա (18) - Սիորթինս Լիզալոն (6) 21:15

ՌՈՍԻՈՅ 7-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Լոքոմոտիվ Մ. (3) - Զրանստար (6) 13:30
Մորտովիա Սարանսկ (13) - Ռուսիա Քազան (15), 17:00
Քուպան Քրասն. (14) - ԲԿՄԱ Մ. (1) 20:00

ՀՈՒՍՏԱՅԻ 4-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Այաքս Ամսթերդամ (1) - Էյ Տի Օ Տեն Հաակ (6) 13:30
Փի Ես Վի Այստհովլըն (7) - Ֆեյենուրտ Ռոթթըր. (2), 17:45

ԱՐՄՆԱՅԻ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Վելեզ Սարսֆիլս (19) - Տեֆենսա Ի ժուսթիսիա (22), 02:30
Արսենալ (30) - Թիկեր (10) 21:10
Սան Լորենցո (1) - Պանֆիլս (9) 22:10
Կոտոյ Քրուզ (21) - Ռասինկ Զլուպ (3) 22:10
Սարմիենթո (23) - Աթլետիկո Ռաֆայել (27) 23:20

ՊՐԱՉԻԼԻ 21-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Սաօ Փաուլո (6) - Փոնթե Փրեթա (12) 03:00
Կրեմիո (3) - Զորիթիպա (17) 17:00
Ֆլումինենսե (4) - Աթլետիկո Մինեյրո (2) 22:00
Շափերենսե (9) - Զորիթիպա (1) 22:00

ՃԻՏՈՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ

Ժամը 13:30-ին սկսվել է Ղազախստանի մայրաքաղաք Ասթանայի մեջ:

ԱՌՆԱՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ 9-ՐԴ ՕՐ

Ժամը 04:30-ին սկսվել է bbc sports channel-ին:

ԵՐԿՐՈՒՄԹԻ 31 ՕԳՈՍՏՈՍ 2015 ժԱՄ

ՄԻՋԱՉԱԳԱՅԻ ԲԱՐԵՎԱՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ 17:00

ՓՈՐՏՈՒԿԱԼԻ 3-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Պելենսես (13) - Մարիթիմո (14) 21:00
Ունիաս Մատեյրա (11) - Վիթորիա Կիմարալե (15), 23:00

ԱՐՄՆԱՅԻ 22-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Ռիվըր Փլեյթ (5) - Յուրաթան (26) 00:15
Ունիոն Սանթա Ֆե (13) - Ռոզարիո Սանթալ (4), 01:30
Ինտիփենսիթենթե (7) - Եստրիանո (11) 03:30

ՊՐԱՉԻԼԻ 21-ՐԴ ՀԱՆԳՐՈՒՄ

Քրուզեյրո (15) - Սանթոս (11) 00:30
Աթլետիկո Փարանսես (8) - Կոյաս (16) 00:30

ԱՄՆ-Ի ԱՌՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ

Նիւ Եորք Ռեյդ (2) - Տի Սի Եունայթըտ (1) 02:00

ՃԻՏՈ ԱՇԽԱՐՀԻ ԱՌՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ

ՂԱԹԵԱՆԸ ՊԱՐՏՈՒԵՑԱՒ

Ղազախստանի մայրաքաղաք Ասթանայի մեջ տեղի ունեցող աշխարհի ճիտոյի ախոյեանութեան մրցումներու առաջին հանգրուանին, 60 քվ դասակարգին մէջ Յովհաննէս Դաւթեանը պարտուեցաւ ֆրանսացի Վենսան Լիմարէն եւ դուրս մնաց յետագայ պայքարին: 66 քվ. դասակարգին մէջ Արսէն Ղազարեանը յաղթեց առաջին հանգրուանին, սակայն երկրորդին պարտուեցաւ մրցակիցէն եւ դուրս մնաց: Կիներու մրցումին 52 քվ. դասակարգին մէջ ժաննա Սթանքեվիչը նոյնպէս յաղթեց առաջին մրցումին, սակայն պարտուեցաւ երկրորդին: Հարկ է նշել, որ ճիտոյի մրցումներուն մարզիկը պետք է հասնի քառորդ աւարտական հանգրուան, որպէսզի կարենայ մասնակցի մետալի մրցումներուն, եթէ իրեն յաղթողը հասնի աւարտական:

ՃԱՏՐԱԿ ՍԻՆՔՏԻԼՏ ԶԱԲԻ ՄՐՑԱԵՐՁԸ ԱՐՈՆԵԱՆԸ ՀԱՎԱՍԱՐԵՑԱՒ

ԱՄՆ-ի Սենթ Լուիս քաղաքին մէջ սկսած ճատրակի միջազգային «Սինքֆիլտ Զաբ»-ի մրցաշարի երկրորդ հանգրուանին, Հայաստանի ներկայացուցիչ Լեւոն Արոնեանը սեւ քարերով հաւասարեցաւ ֆրանսացի Մաքսիմ Վաշիէ Լակրաւին հետ: Երրորդ հանգրուանին ան ճերմակ քարերով հաւասարեցաւ իտալական Վալերիո Կիրիան հետ: Զորրորդ հանգրուանին, ան սեւ

քարերով յաղթեց ամերիկացի Ռեյսի Սոյին: Իսկ ինկերորդ հանգրուանին ճերմակ քարերով հաւասարեցաւ Կրիզուելին հետ: Աշխարհի ախոյեան Քարլսընը գրաւեց առաջատարի դիրքը, օգտուելով թոփալովի պարտութենէն: Միւս մրցումներուն արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները:

Թոփալով - Քարուանա 0-1, Սաքամուրա - Կիրի 0.5-0.5, Քարլսըն - Սո 1-0, Անանտ - Վաշիէ Լակրաւ 0.5-0.5, Դասաուրումը հինգ հանգրուան ետք:

1-Քարլսըն	3.5 կետ,
2-Արոնեան	3.5 կետ,
3-Թոփալով	3 կետ,
4-Կիրի	3 կետ

ՌԱԼԻ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՄՐՑՈՒՄ ՕԺԻԷ՝ ՏԻՏՂՈՍԱԿԻՐ

Ֆրանսացի վարորդ Սեպասթիէն Օժիէ շահեցաւ այս տարւան 9-րդ մրցումը, որ տեղի ունեցաւ Գերմանիոյ մէջ: Այս ֆրանսացիին այս տարւան 6-րդ տիտղոսն էր: Ստորև տեսնել մրցումին արդիւնքը, ինչպէս նաեւ վարորդներու եւ ընկերութիւններու դասաւորումը:

1-Սեպասթիէն Օժիէ (Ֆրանսա, Վոլքսվալըն Փոլօ) 3:34:49.5 ժամ,
2-Եարի Մաթի Լաթվալա (Ֆինլանտա, Վոլքսվալըն Փոլօ) 23 երկվորկ. ուշ,
3-Անտրեսա Միքըլսըն (Նորվեգիա, Վոլքսվալըն Փոլօ) 1:56.6 վրկ. ուշ,
Վարորդներու դասաւորում:
1-Սեպասթիէն Օժիէ 207 կետ,
2-Եարի Մաթի Լաթվալա 114 կետ,
3-Անտրեսա Միքըլսըն 98 կետ,
Ընկերութիւններու դասաւորում:
1-Վոլքսվալըն 300 կետ, 2-Գիուստայ 161 կետ, 3-Սիթրոնե 148 կետ:

ԱՌՆԱՅԻ ԱՇԽԱՐՀԻ ԱՌՈՅՏԱՆՈՒԹԻՒՆ ՊՈՒԹ ՇԱՐԵՑԱՒ 200 ՄԵԹՐԻ ՏԻՏՂՈՍԸ

Շաբաթ օր Չինաստանի մայրաքաղաք Պեյճինգի մէջ սկսած աշխարհի աթլետիկ ախոյեանութեան վեցերորդ օրը տեղի ունեցաւ տղոց 200 մետր վազքի մրցումը: Եունիոն Պոլվարկ-Մեթրեն ետք շահեցաւ նաեւ այս տիտղոսը: Ախոյեանութեան վեցերորդ օրը արձանագրուեցան հետեւեալ արդիւնքները:

400 մետր վազքի կիներու մրցումին առաջին դիրքը գրաւեց ամերիկացի Անիթա Ֆելիքսը, արձանագրելով 49.26 երկվարկետան արդիւնք, յաջաջ անցնելով պահամացի Շոուսի Միլըրէն՝ 49.67 երկ. եւ ճամայթացի Շերիլա Տեքսթընը՝ 49.99 երկ.

Մուրճի արձակումի կիներու մրցումին առաջին դիրքը գրաւեց լեւ Անիթա Վոլտարիքը, արձանագրելով 80.85 մետր արդիւնք, յաջաջ անցնելով չինացի Ռենհիու Շանկէն՝ 76.33 մետր եւ ֆրանսացի Ալեքսանտրա Թալերնիէյէն՝ 74.02 մետր:



200 մետր վազքի տղոց մրցումին առաջին դիրքը գրաւեց աշխարհի ախոյեան ճամայթացի Եունիոն Պոլվարկ-Մեթրենը՝ 19.55 երկվարկետան արդիւնք, յաջաջ անցնելով ամերիկացի Ճասթին Կաթլինէն՝ 19.74 երկ. եւ հարաւ աֆրիկեցի Անասո Ճոպոտվանայէն՝ 19.87 երկ.

Եռաքալ ռատումի տղոց մրցումին առաջին դիրքը գրաւեց ամերիկացի Քրիսթիան Թեյլըրը, արձանագրելով 18.21 մետր արդիւնք, յաջաջ անցնելով քուպացի Փետրո Փիչարոնիէն՝ 17.73 մետր եւ փորթուկալցի Նըլսըն Էվորայէն՝ 17.52 մետր:

Մետալներու դասաւորումը 6 օր ետք:

1-Քենիա	6 ոսկիէ,	3 արծաթէ,	2 պրոնզէ,
2-ԱՄՆ	3,	4,	5
3-Ճամայթա	3,	0,	2
4-Քրիստանիա	3,	0,	0
5-Լեհաստան	2,	1,	3

Կազմակերպութեամբ Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան

ԶՐՈՅՑ-ՀԱՆԴԻՊՈՒՄ

Արի Կաթողիկոսարան մեկնած Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Միաբանութեան պատուիրակութեան հետ

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 1 Սեպտեմբեր 2015-ին, Երեւոյեան ժամը 8:00-ին, Երջո Սամուելեան «Եռագոյն» սրահէն ներս:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տեր եւ Տիկ. Ընկ. Արտեմ եւ Սոնիկ Պիւլպիւեաններ շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց, որոնք անձամբ կամ այլ միջոցներով վշտակցեցան իրենց աներթոր եւ հոր՝ ողբացեալ Օհաննէս (Ժան) Ներսէս Պոստոյեանի մահուան առթիւ:

ՎԱՀԱՆ ԹԷՔԷՆԻԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Յայտարարութիւն

2015-2016 Կրթական Տարեշրջան

- Վերամուտ**
2015-2016 կրթական տարեշրջանը պիտի սկսի երեք Հանգրուաններով:
ա. Միջնակարգ Գ. (Պրէօվէ)՝ Հինգշաբթի, 10 Սեպտեմբերին:
բ. Միջնակարգ (7-րդ., 8-րդ.) եւ Նախակրթարան՝ Հինգշաբթի, 24 Սեպտեմբերին:
գ. Մանկապարտէզ՝ Ուրբաթ, 25 Սեպտեմբերին:
2. 2015-2016 տարեշրջանի լրացուցիչ արձանագրութիւնները պիտի շարունակուի Չորեքշաբթի, 9 Սեպտեմբերէն մինչեւ Չորեքշաբթի, 23 Սեպտեմբեր 2015, դարձեալ առաւօտեան ժամը 9:00-1:00, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէն:
3. Նորեկ աշակերտներ պարտին իրենց Հետ քերել.
ա. Նախորդ դպրոցի վիճակագրող
բ. Անձնաթուղթի լուսագատճէն
գ. Ք լուսանկար
դ. Նախորդ վարժարանի վաւերացուած պետական թիւ.
ե. Բժշկական տեսքակը
4. Վերաքննութիւնները տեղի պիտի ունենան Երեքշաբթի, 1 (Լեզուներ եւ Ընկերային գիտութիւն) եւ Չորեքշաբթի, 2 Սեպտեմբերին (Ուսողութիւն եւ Գիտական նիւթեր) առաւօտեան ժամը 8:00-ին:
5. Ամբան շրջանին, Տնօրէնութեան կրնաք դիմել ամբողջ Յուլիս ամսուան Երեքշաբթի օրերը, կ.ա. ժամը 9:00-1:00: Գրասենեակները փակ պիտի մնան ամբողջ Օգոստոսի ընթացքին:
6. Նորութիւն
ա) 2015-2016 տարեշրջանի վարժարանի նորութիւնը կ'ընդգրկէ օտար Հպատակութիւն ունեցող աշակերտները զերջ մնալու իրանանեան կրթական ծրագրէն: Հետեւաբար, անոնք պետական քննութիւն չեն անցընեն: (Յաւելեալ մանրամասնութեան համար դիմել վարժարանի քարտուղարութեան):
բ) Մանկամտերը բաց է կ'ընդունին 1.5 տարեկանէն սկսեալ փոքրիկներ առաւօտեան ժամը 7:30-էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 2:30 կամ մինչեւ կէսօրէ ետք ժամը 5:00 (յատուկ Համաձայնութեան):

Տնօրէնութիւն

Այցելեցէք
Կարդացէք
Տարածեցէք
www.RagMamoul.net-p

La Solderie DE LUNETTES

Lunettes Solaires et Médicales
1400 modèles à partir de 10\$
Autoroute Jdeideh - Tél. (01) 870016 - Près Boghos Optic

Ղաւանդով ռամկավար եւ ազատական սկզբունքներ, կը հաւատարեք բազմակարծութեան եւ ազատ

ԾԱՐԱԾԵՐ

Խօսքի իրաւունքի: ՚նետեալաբար՝ թերթիս մէջ հրատարակուած գրութիւնները անպայման չեն արտայայտեր խմբագրութեան տեսակետը: Կամքէ անկախ սպրդած վրիպակներու պարագային, կ'ապաւինին յօդուածագիրներուն եւ մեր ընթերցողներուն սերողամտութեան: